- Յուրաքանչյուր համայնքում կառուցելու ենք խաղահրապարակներ:
- Իրականացնելու ենք շրջակա միջավայրի պահպանություն, տարածքների կանաչապատում և կանաչ տարածքների ընդլայնում: Ստեղծելու ենք եղևնիների և տույների պուրակներ:
- Զբոսաշրջության խթանման նպատակով քարտեզագրելու ենք համայնքի՝ զբոսաշրջության գրավչություն ներկայացնող տարածքները, մշակելու ենք համապատասխան փաթեթներ, ստեղծելու ենք կայքէջ՝ բիզնեսին հստակ առաջարկների փաթեթներ ներկայացնելու համար:
- Երիտասարդների դերի բարձրացման նպատակով մշակելու և իրագործելու ենք կարողությունների զարգացման, ոչ ֆորմալ կրթական միջավայրի ստեղծման ծրագրեր: Ստեղծելու ենք երիտասարդական կենտրոն, որը կմիատեղի ժամանցը և գիտելիքների զարգացումը:
- Ստեղծելու ենք մասնագիտական կողմնորոշման կենտրոն, կազմակերպելու ենք աշխատաշուկայի և մասնագիտությունների տոնավաճառներ, բիզնես-սեկտորի հետ հաստատելու ենք համագործակցություն, առավել խոցելի խմբերի դիմակայունության բարձրացմանն ուղղված ծրագրեր ենք մշակելու և գործարկելու:
- Համայնքի մշակութային և հանրային կյանքի ակտիվացման և աշխուժացման նպատակով կազմակերպելու ենք փառատոններ, համերգային ծրագրեր: Իրականացնելու ենք տարածքի մշակութային արժեքների բրենդավորում և մասնակցություն ենք ունենալու հանրապետական ու միջազգային փառատոններին:
- Վարչական շրջաններում ապահովելու ենք մանկապարտեզների աշխատանքը՝ շուրջտարի, վերանորոգելու ենք կարիք ունեցող մանկապարտեզները և ապահովելու ենք գույքով: Բարձրացնելու ենք նախադպրոցական կրթության որակը, ստեղծելու ենք նոր մանկապարտեզներ:
- Ապահովելու ենք արտադպրոցական կրթության հասանելիություն վարչական շրջաններում:
- Ապահովելու ենք հողատարածքների կայուն ջրամատակարարումը, գյուղատնտեսության զարգացման պայմանների խթանումը, ջրարբիացումը: Ավարտին ենք հասցնելու Գավառի, Հայրավանքի, Բերդկունքի ջրարբիացման աշխատանքները:
- Իրականացնելու ենք ներհամայնքային և միջհամայնքային փողոցների լուսավորության ցանցի ընդլայնում՝ որպես պլան սահմանելով առկա ծավալի առնվազն կրկնապատկումը:
- Ապահովելու ենք համայնքային մատուցվող ծառայությունների որակի բարձրացումը՝ մասնագետների կարողությունների զարգացման ծրագրերի իրականացման ճանապարհով:
- Ապահովելու ենք գլխավոր ճանապարհների ձնամաքրման աշխատանքները:
- Կրկնապատկելու ենք փողոցների ասֆալտապատման եղած ծավալը:

ՆՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՅԼ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Բարձրացնելու ենք ՏԻՄ գործունեության թափանցիկությունը և հաշվետվողականությունը:
- Միջազգային և դոնոր կազմակերպությունների հետ պահպանելու և զարգացնելու ենք համագործակցությունը՝ խնդիր սահմանելով վարչական շրջաններում ներդրումային ծրագրերի իրականացնումը:
- Առաջիկա հինգ տարում մեր առաջնահերթություններից է լինելու վարչական շրջանների համաչափ զարգացումը:
- Կարևորելու ենք ՏԻՄ- ՔՀԿ համագործակցության սերտացումը:
- Քաղաքի բյուջեն կառավարելու ենք մասնակցային կերպով:
- Մշակելու և իրականացնելու ենք ծրագրեր, որոնք կփոխեն համայնքի յուրաքանչյուր բնակչի կյանքը:
- Նպաստելու ենք ՏԻ բարեփոխումներին ու զարգացմանը:
- Կառավարության կողմից տրամադրվող և համայնքի համաֆինանսավորմամբ սուբվենցիոն ծրագրերի իրականացման գործում լինելու ենք նախաձեռնողական և ճկուն, որպեսզի դրական փոփոխությունները հնարավորինս արագ նկատելի լինեն բոլոր վաչական շրջաններում:

Պատվիրատու՝ «Քաղաքացու որոշում» ՍԴԿ: Տպագրվել է «Ասողիկ» հրատարակչության տպարանում: Պատվեր՝72815: Տպաքանակ՝ 10.000:

№ 1

ԳՈՒՐԳԵՆ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԴԱՇԻՆՔ

ՄԵՆՔ ՈՒԺԵՂ ԵՆՔ ՄԻԱՍԻՆ

05.12.2021Թ. ՏԻՄ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔ

Սիրելի՛ համաքաղաքացիներ,

ԳԱՎԱՌ ԽՈՇՈՐԱՑՎԱԾ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԻՐԵԼԻ՛ ԲՆԱԿԻՉՆԵՐ

2021 թվականի դեկտեմբերի 5-ին Գավառի տարածաշրջանում անցկացվելու են համամասնական ընտրակարգով ավագանու ընտրություններ, որում մենք մասնակցելու ենք «Գուրգեն Մարտիրոսյան» դաշինքի ձևաչափով և որպես համայնքի ղեկավարի թեկնածու ենք առաջադրելու Գավառի գործող քաղաքապետ Գուրգեն Մարտիրոսյանին:

Առաջիկայում նախատեսվող բազմաթիվ հանդիպումներում մենք միասին կքննարկենք ձեզ հուզող բոլոր հարցերը: Այդ հանդիպումներին մենք կներկայանանք ՏԻՄ-ի կողմից մատուցվող ծառայությունների որակի բարձրացման, համայնքների համաչափ զարգացման, առկա ներուժի ճիշտ ներդրման, զբոսաշրջության զարգացման, կրթամշակութային կյանքի ակտիվացման և այլ ոլորտներին առնչվող հստակ ու չափելի ծրագրերով, պատրաստակամ կլինենք լսելու առաջարկներ, գաղափարներ, մտահոգություններ՝ ավելի լավ համայնք դառնալու համար: Այդպես է եղել անցնող տարիներին, այդպես էլ շարունակվելու է հետայսու:

Ընտրությունը մեր առջև բացում է Գավառի տարածաշրջանի զարգացման հնգամյա նոր շրջանը՝ այս անգամ միավորված մեկ համայնքի շուրջ: Յուրաքանչյուրս մեր համայնքից դուրս ներկայանում ենք որպես քյավառցի և մեր այդ միասնական ինքնությունը պիտի դրսևորվի այս ընտրություններում և դրանից հետո՝ որպես մեկ լիարժեք ու միասնական համայնք:

Համոզված ենք, որ զարգացման առաջիկա 5 տարիները, որը մենք ենք ուրվագծելու, դառնալու է մեր միավորված համայնքի պատմության կարևորագույն էջերից մեկը: Այս լավատեսական ձգտումն է մեզ միշտ ոգեշնչել ծառայել մեր ժողովրդին: Այսպիսով, մեր կոչն ու առաջարկը ձեզ. գալիք ընտրություններում քվեարկեք «Գուրգեն Մարտիրոսյան» դաշինքի օգտին, քվեարկեք հանուն զարգացման, մաքրության, բարեկարգման, լուսավորության, համերաշխության և կարգուկանոնի: Քվեարկեք հանուն միասին և նոր թափով շարունակելու: Մենք միասնական ենք՝ Բերդկունք, Գանձակ, Գեղարքունիք, Լանջաղբյուր, Լճափ, Ծաղկաշեն, Ծովազարդ, Կարմիրգյուղ, Հայրավանք, Նորատուս, Սարուխան, Գավառ:

ՆՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

ՏԵՂԱԿԱՆ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՄՐԱՊՆԴՈՒՄ ԵՎ ՁԱՐԳԱՑՈՒՄ

- Կարևոր հարցերը որոշվելու են համայնքների բնակիչների հետ խորհրդակցության արդյունքում
- Ավագանին գործուն դեր է ունենալու որոշումների կայացման գործընթացում
- Համայնքային զարգացման ծրագրերի մշակման գործում ներգրավելու ենք ակտիվ և փորձառու քաղաքացիներին ու մասնագետներին:

ՄԱՍՆԱԿՑԱՅԻՆ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԿԱՅԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

- Վարչական համայնքներում ստեղծելու ենք համայնքի ղեկավարին կից խորհուրդներ
- Գնահատելու ենք վարչական շրջանների կարիքները և միասին ենք սահմանելու առաջնահերթությունները
- Համայնքի ղեկավարության մասնակցությամբ տարեկան հաշվետու ժողովներ ենք անցկացնելու վարչական բոլոր շրջաններում
- Լսելի է լինելու բնակչի ձայնը (հանրային լսումներ, ժողովներ, թաուն հոլ և այլ ձևաչափ)

ԱՎԱԳԱՆՈՒ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ՁԱՐԳԱՑՈՒՄ

- Անցկացնելու ենք արտագնա նիստեր՝ տարբեր վարչական շրջաններում:

ՆՈՐ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԿԱՏԱՐԵԼԻՔ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ

- Կազմակերպելու ենք աղբահանություն և սանիտարական մաքրման աշխատանքներ՝ ամենօրյա գրաֆիկով: Վարչական շրջաններում տեղադրելու ենք նոր աղբարկղեր՝ յուրաքանչյուր 100 բնակչի հաշվով 1100 լ տարողությամբ 1 աղբաման:
- Իրականացնելու ենք սոցիալական աշխատանքի ներդնում և սոցիալական աշխատողի դերի բարձրացում: